Հավելված
ՀՀ կառավարության 2011 թ.
սեպտեմբերի 29-ի նիստի N 38
արձանագրային որոշման

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Հանձնարարականի կատարվելիք աշխատանքների և միջոցառումների համառոտ նկարագիրը	Կատարման պատասխանատուն	Համակատարողը	Ժամկետը	2012թ. ֆինանսավորման աղբյուրը և պահանջվող գումարը
1 Կառավարման համակարգի կատարելագործում						
1.1.	“Սևան ազգային պարկ” ՊՈԱԿ-ի կառավարման համակարգի կատարելագործում	Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի գետերի ջրերի աղտոտվածության մոնիտորինգի իրականացում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ ԳԱԱ (համաձայնությամբ)	2012 թ. և շարունակական	“Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն” ՊՈԱԿ-ի կողմից կատարվող “ Ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի ծառայություններ” ծրագրի շրջանակներում:

		Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում հիդրոկենսաբանական և հիդրոօդերևութաբանական մոնիթորինգի իրականացում:	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ ԳԱԱ (համաձայնությամբ)		,,Հայպետհիդրոմետ,,ՊՈԱԿ-ի կողմից 2012թ. ընթացքում կատարման ենթակա պետական նշանակության հիդրոօդերևութաբանական աշխատանքների ծրագրին համապատասխան
		Սևանա լճի ավազանի ինժիներաեկրաբանական և սեյսմաշրջանացման դիտարկումների իրականացում	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	2012 թ. և շարունակական	Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության ՊՈԱԿ-ների կողմից 2012թ. ընթացքում կատարվող ,,Սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի,, շրջանակներում
2. Սևանա լճի ջրհավաք ավազանի բնապահպանական և բնօգտագործման գործառույթների կատարելագործման միջոցառումներ						
2.1.	Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում անտառմաքրման աշխատանքների իրականացում	Լճի շրջակայքի շուրջ 300հա անտառշերտերի մաքրում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	2012 թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե՝ 125.4մլն. դրամ
2.2.	Սևանա լճի ջրհավաք ավազանում կենդանական ռեսուրսների հաշվառում ,	Կենդանական ռեսուրսների, այդ թվում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում և օգտագործման թույլատրելի չափաքանակների սահմանում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ ԳԱԱ (համաձայնությամբ)	2012 թ. և շարունակական	Պետ բյուջե՝ 7.526մլն. դրամ <<Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում>> ծրագրի շրջանակներում

	օգտագործման թույլատրելի չափաքանակների սահմանում					
2.3.	Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի տարածքում մարզերի և համայնքների ըստ ոլորտների սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամկետ ծրագրերի մշակում	Արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, էներգետիկայի, կապի, տուրիզմի, քաղաքաշինության և բնապահպանության ոլորտների զարգացման միջոցառումների մշակում	ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ քաղաքաշինության, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների, ՀՀ բնապահպանության նախարարություններ	Մարզպետներ, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	2012 թ. և շարունակական	Միջազգային ֆինանսավորման առկայության դեպքում
2.4.	Գավառի, Մարտունու, Վարդենիսի մաքրման կայանների, Սևան, Ձերմուկ, Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքների կոյուղագծերի շինարարության և վերականգնման աշխատանքների իրականացում	Վերակառուցման և զարգաց-ման եվրոպական բանկի աջակցությամբ իրա-կանացվող Սևանա լճի բնապահպանական ծրագրի շրջանակներում Գավառի, Մարտունու, Վարդենիսի մաքրման կայանների, Սևան, Ձերմուկ, Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքների կոյուղագծերի շինարարության և վերականգնման աշխատանքների ավարտում	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	ՀՀ Գեղարքունիքի մարզպետ, ՀՀ բնապահպանության նախարարություն	2012 թ.	Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող ծրագիր՝ 8.485.278 եվրո
2.5.	Ձկան պաշարների համալրում	Արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների վերարտադրության ապահովում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ Գեղարքունիքի մարզպետ, ՀՀ ԳԱԱ (համաձայնությամբ)	2012 թ. և շարունակական	Պետ.բյուջե՝ 60.0մլն. դրամ «Ձկան պաշարների համալրման ծառայություններ» ծրագրի շրջանակներում
2.6.	,,Սևան,, ազգային պարկի	Պարկի տարածքի բնական էկոհամակարգերի,	ՀՀ բնապահպանության	ՀՀ ԳԱԱ (համաձայնությամբ)	2012 թ. և շարունակական	Պետ.բյուջե՝ “Սևան” ազգային պարկի

	պահպանություն, պարկում գիտական ուսումնասիրություն-ների և անտառ-տնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ	լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության պահպանություն, վերարտադրություն, գիտական ուսումնասիրություններ և շրջակա միջավայրի դիտանցի իրականացում	նախարարություն			պահպանություն, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ՝ ծրագիր՝ 183,721 մլն դրամ
2.7.	,,Սևանի ջրավազանային կառավարման պլանը հաստատելու մասին ,, ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	Սևանա լճի ջրաէկոհամակարգի վիճակի բարելավում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	2012 թ.	Այլ աղբյուրների հաշվին՝ 40 մլն դրամ
2.8.	,,Սևան,, ազգային պարկին հարող համայնքների գլխավոր հատակա-գծերի մշակման համակարգման միջոցառումների իրականացում	Ափամերձ տարածքներին հարող համայնքների կայուն քաղաքաշինական զարգացման համար անհրաժեշտ հիմքերի ստեղծում	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	2012 թ.	համայնքային բյուջեներ
2.9.	Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա ճանապարհային հատվածների տեղափոխում, ափապաշտպան	Տրանսպորտային միջոցների երթևեկության ապահովում	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	2012 թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջեից հատկաց-վելիք միջոցների շրջանակնե-րում՝ նախագծա-նախահաշվար-կային փաստաթղթերի առկայության դեպքում

	միջոցառումներ և ջրահեռացման համակարգի վերակառուցում					
2.10.	Սևանա լճի ջրհավաք ավազանում հանքավայրերի շահագործման արդյունքում կուտակված թափոնների վնասազերծման միջոցառումների մշակում և զբաղեցրած տարածքների վերականգնում	Տարածքների վերականգնման աշխատանքների նախագծերի մշակում Տարածքների վերականգնման աշխատանքների իրականացում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	2012 թ. և շարունակական	ըստ անհրաժեշտության՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխից, գումարը՝ ըստ գույքագրման արդյունքների